



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 դեկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերը, 407-րդ հոդվածի 5-րդ մասը, 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 եւ 42-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. դիմողը գտնում է, որ նշյալ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումներն իր վրա դրել են լրացուցիչ պարտավորություններ, այն է՝ «վճարեկ բողոքին կցվում է նաև վճարեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը), վճարեկ բողոքը ներկայացվում է փաստաբանի միջոցով»:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասը, 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը հակասում են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին, քանի որ իրեն գրկում են իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների հնարավորությունից՝ միաժամանակ խախտելով դատարանի մատչելիության իրավունքը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար առաջացած՝ իր կարծիքով անբարենպաստ հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետեւաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն, դիմողը վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց, որն էլ, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, հանդիսանում է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

3. Դիմումի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի առնչությամբ քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

4. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանին միջնորդություն է ներկայացրել՝ իրեն պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին կետով եւ 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի մասով մերժել:

2. Քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանի անհատական դիմումի հիման վրա գործը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի մասով ընդունել քննության:

3. Բավարարել դիմողի՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

4. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

12 դեկտեմբերի 2014 թվականի

ՍԴԴԿՈ/2-18